

ՄԻԱՍԻՆ ՇԵՆՑՆԵՆՔ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Posted on May 10, 2023 by Keghart



Category: [Opinions](#)



Ալեքսան Սարտիրոսեան, Երեւան, 10 Ապրիլ 2023

Կրնայ պատահիլ որ արձակուրդի մը առիթով հարեւանէն ինդրենք եւ ան յօժարի հսկել ու աչք պահել մեր տան վրայ մինչեւ մեր վերադարձը:

Նաեւ կրնայ պատահիլ որ ինչ-ինչ պատճառներով, շարունակենք հեռու մնալ երկար ժամանակով կամ չվերադառնանք՝ մեր տան հսկողութիւնն ու խնամքը հարեւանին թողելով:

Ազնիւ հարեւանը, ի վերջոյ յոգնելով, ստիպուած պիտի լքէ տան հսկողութիւնը՝ ամէն ինչ իր վիճակին ձգելով:

Ու քանի որ բնութիւնը պարապութիւն չի հանդուրժեր, եթէ ոչ գողերը, նուազագոյնը կենդանական աշխարհը, միջատներէն սկսած, ներս պիտի սողոսկին ու քայլ առ քայլ գրաւեն տարածքը...

Իսկ ի՞նչ կը պատահի, երբ մեր հարեւանը ոխերիմ թշնամի է...

Ո՞վ իրաւասութիւն տուած է **ՀԱՅ**ին, որ լքէ իր տունը – այս պարագային՝ Հայրենիքը –, հեռանայ անկէ եւ ակնկալէ, որ սրտցաւ ու բարեացակամ ուրիշներ տիրութիւն ընեն անոր մինչեւ իր թեական վերադարձը:

Հետաքրքրական պիտի ըլլար իմանալ, թէ «Գեղարդ»ի վերջին թողարկման **«Համազգային արթնութեան հրամայականը»** խմբագրականը որո՞ւ էր ուղղուած.

Սահմանապահ գիւղի՝ «Կրին քարթ» շահիլ չկրցած ընտանիքի՞ն,

65.000 Դրամ (167 ամ. տոլար) ամսական ստացող պարտիզպանի՞ն,

Թե՞ 120.000 Դրամ (310.00 ամ. տոլար) ամսականով աշխատող բուժքրոջ:

Ո՞վ ընծայած է պերճանքն ու ճոխութիւնը այն «Հայ»ին, որ հեռացած է իր Հայրենիքէն, բայց հեռաւոր քաղաքներու բեմերէն հայրենասիրութեան դասեր կը շռայլէ աջ եւ ձախ:

Սկսեալ ինձմէ՛, ամէն մէկ հայու բացթողումն ու մեղքն էր – եւ է՛ – Հայաստանի Հանրապետութեան ներկայ անմխիթար վիճակը:

31 տարիէ աւելի, կարծեցեալ «անկախութեան» պատրանքով, ամառնային փառատօներ ու աշնանային համագումարներ ենք կազմակերպած եւ Հ.

Հ.ը արձակուրդային հանգստավայրի ենք վերածած:

Թշնամիի «Տրովադայի ձի»ն սողոսկած է մեր միջնաբերդի դարպասէն ներս, մինչ մենք Անկախութեան օրուան առթիւ ձեւական ռազմական շքերթներ ենք դիտած զգացական զեղումներով:

Թշնամիի գործակալ չորս յաջորդական նախագահներ օտարներուն չնչին գումարներով

վաճառած են մեր երկրի ընդերքին ռազմավարական հարստությունը, թալանած են Հ. Հ.ի ընտիր ժողովուրդին ժառանգությունն ու օտար եւ սփիւռքահայ բարերարներու նուիրաբերած նպաստները, եւ, ամենէն վատը, ՄՍԽԱԾ են քաջ սերունդի մը արեան գինով վաստակուած **Արցախեան Յաղթանակը**:

Սփիւռքահայի 45 տարիներու հարուստ փորձս ու 6 տարիներու հայրենադարձի՝ Հ. Հ.ի բնակչութեան լայն խաւերու հետ շփումներս զիս բերած են եզրակացութեան, թէ այս տխուր իրականութենէն դուրս գալու լուծումը **ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ** է՝ հիմնուած պատգամին վրայ Մկրտիչ Պէշկեթաշլեանի «Եղբայր եմք մեք» բանաստեղծութեան.

**Ի բիւր ձայնից բնութեան շրջեղ,
Թէ երգք թռչին սիրողաբար,
Մատուց կուսին ամենագեղ,
Թէ որ զարնեն փափուկ քընար.
Չունին ձայն մի այնքան սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:**

**Տո՛ւր ինձ քո ձեռք, եղբայր եմք մեք,
Որ մրրկաւ էինք զատուած,
Բախտին ամէն ոխ չարանենգ,
Ի մի համբոյր ցրուին ի բաց.
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:**

**Երբ ալեւոր Մայր Հայաստան
Բերէ զորդիս իւր քովէ քով՝
Սրտի խորունկ վերքն դաժան
Քաղցր արտասուաց բուժին ցօղով.
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:**

**Մէկտեղ լացինք մեք ի հնում,
Եկէք դարձեալ յար անբաժան,
Խառնենք զարտօսր եւ ըզխնդում,
Որ բազմաճնունդ ըլլայ մեր ջան.
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:**

**Մէկտեղ յոգնինք, մէկտեղ ցանենք,
Մէկտեղ թափին մեր քրտինքներ,
Ըզհունձ բարեաց յերկինս հանենք,
Որ կեանք առնուն հայոց դաշտեր:**

**Ընդ աստեղծքի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:**

There are no comments yet.